Ողջու՛յն, հարգելի՛ս…

Ես Սուսաննան եմ՝ 16 տարեկան, հարևան Հայաստանից: Նամակս գրելիս մի պահ կարկամեցի, հուզմունքս խեղդում էր կոկորդս, ցավը՝ սրտիս, վիշտը՝ հոգուս մեջ, բայց գիտակցությունս՝ սթափ:

Գիտեմ, որ դու էլ ինձ պես երիտասարդ ես, ով նպատակներ ունի և չի ցանկանում օգտագործել և լսել «թշնամի» բառը: Տարիներ շարունակ մեր ազգերը ապրել են համերաշխ, որպես հարևաններ: Տատիկս պատմում է, որ Իջևանի շուկայում մեծամասամբ ադրբեջանցիներն էին ապրանք վաճառում, և մենք լավ հարևաններ էինք, ձեր լեզվով ասած՝ յուրաքանչյուր հայ ընտանիք ուներ իր դոստը՝ բարեկամը:

Պատերազմ բառը լսելիս մարմնովս դող է անցնում: Ես չեմ փորձում գտնել մեղավորներ և պարզել, թե մեզնից ով սկսեց այն: Երկու կողմերն էլ ունեցան անդառնալի կորուստներ, չէ՞ որ պատերազմը փշրում է մարդկանց անկատար երազանքները, ամայացնում է երկրներ, որբացնում երեխաների, որդուն խլում է մորից, սիրող մարդկանց բաժանում է իրարից, և որ ամենավատն է՝ թշնամություն ու ատելություն սերմանում անմեղ մարդկանց հոգում: Պատերազմը խլում է մեզնից ամեն ինչ:

Պետությունը պետք է խուսափի պատերազմից այնպես, ինչպես նավավարը խուսափում է նավաբեկությունից: Բայց երկուսիս դեպքում էլ պետությունները խթանում են թշնամությունն ու պատերազմը: Մորը, որը թաղում է իր որդուն, ում սիրտը կտոր–կտոր լինում ցավից, տառապանքից, ում հոգեկան աշխարհում փոթորիկ է, պետք չեն պատվոգրեր կամ հերոսի կոչում, նրան միայն պետք է վերստին տեսնել, գրկել որդուն, ապրել ու շնչել նրանով:

Ես և դու մեր ազգերի ապագան ենք, մենք մեր սերունդներին պետք է հավաստիացնենք, որ պատերազմը մեզ ոչինչ չի տա: Պետք է թույլ չտալ, որ մեր ժողովուրդները նորից ունենան զոհեր: Մեր երեխաները պետք է ապրեն խաղաղ ու ապահով երկրում, որտեղ տիրում է սեր, համերաշխություն և պայծառ ապագա: Քսանմեկերորդ դարը պետք է լինի խաղաղության և համերաշխության դար:

Ես ցանկանում եմ, որ մեր երկրներն ապրեն բաց սահմաններով, որ մեզնից յուրաքանչյուրը կարողանա այցելել իր բարեկամի գերեզմանը, չէ՞ որ երկու կողմն էլ տարբեր տարածքներում թողել են իրենց հարազատների գերեզմանները:

Ապրիլյան պատերազը մեզնից խլեց բազմաթիվ երիտասարդներ, անկատար մնացին բազմաթիվ երազանքներ, նպատակներ. դրանք հօդս ցնդեցին: Ես ուզում եմ հանգիստ խղճով գլուխս դնել բարձին, ես ուզում եմ, որ մեր ազգերը ապրեն առանց ատելության: Ե՛կ միասին հենց այսօրվանից մեր ուժերի ամբողջ լարումով մեր շրջապատում, ընկերական միջավայրում աշխատենք տարածել այն գաղափարը, որ պետք չէ պատերազմել, որ քսանմեկերորդ դարը քաղաքակրթության դարաշրջան է, որ մենք այլևս չենք կարող տառապել, սգալ, արտասվել:

Թող Աստված մեզ և ձեզ սթափ դատելու միտք, խաղաղություն և սեր, համերաշխություն և հարգանք տա:

Երիտասարդությունը հզոր ուժ է, և ես համոզված եմ, որ հենց մենք՝ երիտասարդներս, կարող ենք թերթել «Պատերազմ» կոչվող գրքի վերջին էջը և գրել մի նոր գիրք՝ «Խաղաղություն» վերնագրով:

Հարգանքներով՝

Խաղաղության կողմնակից Սուսաննա